Պահանջվող փաստաթղթեր

- Հիմնադիրների, տնօրենի և գլխավոր հաշվապահի անձը հաստատող փաստաթղթեր,
- Հարկային տեսչությունից տեղեկանք պարտավորությունների մասին,
- Էլեկտրոնային եղանակով Հարկային տեսչություն ներկայացված վերջին 1 տարվա հաշվետվությունները և հաշվետվություններն ընդունված լինելու վերաբերյալ ծանուցում,
- Իրավաբանական անձի կանոնադրության պատճեն,[1]
- Իրավաբանական անձանց գրանցման պետական ռեգիստրի վկայականի պատճեն (իր ներդիրներով) և ՀՎՀՀ-ի պատճեն (իրավաբանական անձանց դեպքում պահանջվում է ըստ անհրաժեշտության),[1]
- Տեղեկանք իրավաբանական անձանց գրանցման պետական ռեգիստրից,[1,2,3]
- Քաղվածք ռեեստրից՝ բաժնետիրական ընկերության դեպքում,[3]
- Գրավ(ներ)ի սեփականության վկայական, տեխնիկական անձնագիր, սեփականատերերի անձը հաստատող փաստաթղթեր, ամուսնության վկայական և գրավների լուսանկարներ,
- Բանկը «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքով սահմանված հաճախորդի պատշաճ ուսումնասիրության նպատակով կարող է «Ճանաչիր քո հաճախորդին» («Know your customer») սկզբունքի հիման վրա պահանջել լրացուցիչ փաստաթղթեր կամ այլ տեղեկություններ, ինչպես նաև բանավոր հաղորդակցման ընթացքում լրացուցիչ հարցեր տալ,
- Անհրաժեշտության դեպքում կարող են պահանջվել նաև այլ փաստաթղթեր:
- Հիմնավորում, որ նախորդող 365 օրերի ընթացքում առկա չէ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով մեկ միլիոն դրամ և ավելի հարկային պարտավորությունների մասով գանձման որոշում, և հայտի ներկայացման օրվան նախորդող օրվա դրությամբ առկա չէ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորություններ,
- Հիմնավորում, որ նախորդող 365 օրերի ընթացքում յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի համար հաշվարկներով ներկայացված շրջանառության առնվազն 80%-ը ձևավորվել է՝ ՀՀ էկոնոմիկայի նախարարի 2013 թվականի սեպտեմբերի 19-ի N 874-Ն հրամանով հաստատված՝ Տնտեսական գործունեության տեսակների դասակարգիչների C(UH) «ՄՇԱԿՈՂ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ» բաժնի C(UH)13 «Մանածագործական արտադրատեսակների արտադրություն» և C(UH)14 «Հագուստի արտադրություն» դասակարգիչներով սահմանված տնտեսական գործունեության տեսակներից,
- Հիմնավորում, որ նախորդող 365 օրերի ընթացքում C(UH) բաժնի C(UH)13 և C(UH)14 դասակարգիչներով սահմանված տնտեսական գործունեության տեսակներից ՀՀ ծագում ունեցող ապրանքները ՀՀ-ից արտահանվել է ԵԱՏՄ անդամ երկրներ կամ «Արտահանում» մաքսային ընթացակարգով արտահանվել է ԵԱՏՄ անդամ պետություն չհանդիսացող այլ երկրներ,

1 Փաստաթղթերը պահանջվում են, եթե ՀՀ ԱՆ պետական ռեգիստրի տվյալների շտեմարանում տվյալները կամ փաստաթղթերը բացակայում են կամ սխալ են:
2 Տեղեկանքը կարելի է ստանալ Բանկից կամ ՀՀ ԱՆ պետական ռեգիստրի գործակալությունից, ընդ որում՝ իրավաբանական անձ հաճախորդների կողմից տեղեկանքի ներկայացումը պարտադիր է, իսկ անհատ ձեռնարկատեր հաճախորդների կողմից պարտադիր է իրավաբանական անձանց գրանցման պետական ռեգիստրի վկայականը իր ներդիրներով չներկայացնելու դեպքում:
3 Կարող է ներկայացվել Բանկի կողմից վարկը տրամադրելու վերաբերյալ դրական որոշում կայացնելուց հետո: